ԻՆՉԻ՞Ն Է ՆՊԱՍՏՈՒՄ ՆՊԱՍՏԸ

Մարդկային պատմությունների շարք

HUMAN RIGHTS
RESEARCH CENTER

«Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» ՀԿ

«Ինչի՞ն է նպաստում նպաստը»
Մարդկային պատմությունների շարք

«Իրավունքահենք արձագանք աղքատությանը»
հետազոտահեն ադվոկացիոն նախագիծ

Մեր երախտապարտությունն ենք հայտնում պատմության յուրաքանչյուր հերոսին՝ մեզ հետ իր պատմությունը կիսելու և խնդիրները բարձրաձայնելու պատրաստակամության համար:

Պատմությունների հավաքագրման աշխատանքներում աջակցելու համար շնորհակալություն ենք հայտնում՝

- «Օրրան» բարեգործական կազմակերպությանը
- «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ին
- «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ին
- «Առաքելություն Հայաստան» ԲԿ-ին
- «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ին

Նախաբան՝
Անահիտ Սիմոնյան

Նախաբանի խմբագրում՝
Անահիտ Սիմոնյան
Անի Թադևոսյան

Պատմությունների խմբագրում՝
Անի Թադևոսյան
Անի Ասատրյան
Անահիտ Սիմոնյան

Գրքույկում տեղ գտած պատմությունները հավաքագրել են՝
Անի Թադևոսյանը
Անահիտ Սիմոնյանը
Վահրամ Հովեյանը
Արտաշես Խաչատրյանը
Մանե Մաթևոսյանը
Լուսինե Գասպարյանը

Nihil de nobis, sine nobis
(«Ոչինչ մեր մասին՝ առանց մեզ»)

Աղքատությունը Հայաստանի Հանրապետության գոյության 30 տարվա ուղեկիցն է, և այդ խնդրի լուծումը Հայաստանի կառավարությունն առ այսօր ձախողել է: 2018թ. դրությամբ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից արձանագրված՝ **աղքատության մակարդակը կազմում է 23,5%**: Այսինքն, աղքատ է 700,000 քաղաքացի: Նրանցից **ծայրահեղ աղքատ է 30,000 մարդ:** Միևնույն ժամանակ, մանկական աղքատության ցուցանիշը, ըստ ՎԿ-ի, կազմում է 29,2%, իսկ ծայրահեղ աղքատության մեջ ապրում են երեխաների 1,5% (տե՛ս, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2019», ՀՀ ՊՎԿ, 2019թ.):

Հայաստանում աղքատության չափման պաշտոնական մոտեցումը համարվում է բացարձակ աղքատությունը, որը չափվում է ըստ սպառման, և աղքատ են համարվում Հայաստանում այն անձինք, ում ամսական սպառումը ցածր է սպառման վերին գծից, որը կազմում է 42,621 ՀՀ դրամ:

Աղքատության խնդրի թվային և դրամային այս բնութագրիչները, աղքատության չափման մեթոդաբանությունը և վերջապես՝ աղքատության սահմանումը և բնորոշումը առանձին քննարկման հարցեր են, որին անդրադառնում է սույն նախագծի շրջանակներում պատրաստված քաղաքականության վերլուծականը:

1994թ.-ից ներդրված «Փարոս» համակարգից մինչև 2000-ականների աղքատության հաղթահարման ռազմավարությունները, պետական նպաստների հատկացումից մինչև կառավարության ծրագրերում մշտապես տեղ գտնող՝ աղքատությունը հաղթահարելու վերաբերյալ պնդումներն ու ցուցանիշները ամփոփում են աղքատության արձագանքմանն ուղղված պետական քաղաքականությունը, որը դեռևս չի հաջողել ստեղծել արժանապատիվ կենսապայմաններում և պաշտպանված միջավայրում ապրելու հնարավորություններ ՀՀ քաղաքացու համար:

Դժվար չէ կռահելը, որ աղքատությունը անձին դնում է անհավասարության և սահմանափակումների շրջանակի մեջ: Աղքատությունն արդեն իր ազդեցությունն է թողում մինչև անձի ծնունդը և ազդում է ամբողջ հետագա կյանքի վրա: Հետազոտությունները ցույց են տալիս, որ անապահովությունն ու ծառայությունների անհավասար հասանելիությունը աշխարհում մանկամահացությանը և մայրամահացությանը մեծապես նպաստող պատճառներից են, իսկ աղքատության բացասական ազդեցությունները հղիության վրա բազմապիսի են:

Վաղ մանկական աղքատությունը բացասաբար է ազդում երեխայի առողջության և սոցիալ-հոգեբանական զարգացման վրա, սահմանափակում նրա հանգստի և ժամանցի հնարավորությունները, խոչընդոտում հասակակիցների հետ փոխհարաբերությունների ձևավորմանը (տե՛ս, “Countdown to 2015. Taking stock of maternal, newborn and child survival. Decade Report (2000-2010)”, WHO, 2015):

2016թ. Յունիսեֆի կողմից իրականացված հետազոտության տվյալներով, Հայաստանում 0-5 տարեկան **ամեն երրորդ երեխան զուրկ է բնակարանային բավարար պայմաններում ապրելու հնարավորությունից** (քանդված պատուհաններ, տարածքի սակավություն և այլն): 3-5 տարեկանների շրջանում, 53% տոկոսը չեն ստանում նախադպրոցական կրթություն (տե՛ս, «Child poverty in Armenia: National Multiple Overlapping Deprivation Analysis», UNICEF, 2016):

Աղքատությունը պատճառ է դառնում երեխայի աշխատանքի և աշխատանքային շահագործման՝ անդառնալի վնաս հասցնելով երեխայի կրթությանը, զարգացմանն ու առողջությանը և զրկելով հետագայում աղքատությունը հաղթահարելու ամենաառաջնային ռեսուրսներից: ՎԿ-ի կողմից 2015թ.-ին իրականացված ուսումնասիրության տվյալներով, Հայաստանում աշխատող երեխաների թիվը հասնում է 52,000-ի, իսկ նրանցից 39,300-ը կատարում է արգելված աշխատանք (տե՛ս, «Հայաստան. երեխայի աշխատանքի ազգային հետազոտություն»):

Աղքատությունը, լինելով սոցիալական անարդարության և անհավասարության դրսևորում, ենթադրում է նաև ներխմբային անհավասարության և խոցելիությունների «հիերարխիկ» կառուցվածք: **Աղքատության հանդեպ շատ խոցելի են տարեցները:** Ըստ տարիքային խմբի ցուցանիշների, Հայաստանում աղքատ բնակչության մեջ տարեց՝ 65 տարեկանից բարձր մարդիկ կազմում են բնակչության 13,9%-ը: Այս ցուցանիշը զգալիորեն գերազանցում է տարիքային մյուս բոլոր խմբերում աղքատության տարածվածության ցուցանիշները:

Ամբողջ աշխարհում, Հայաստանում նույնպես, **կանայք ավելի աղքատ են, քան տղամարդիկ**: Ըստ սեռային բաշխվածության, կանայք կազմում են Հայաստանի աղքատ բնակչության 55,2%-ը (տե՛ս, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2019թ.», ՀՀ ՊՎԿ, 2019թ.): Աղքատությունն ինքնին գենդերայնացված ֆենոմեն է, և յուրաքանչյուր երկրում աղքատության պատկերի վերլուծությունը չի կարող իրականացվել առանց խնդրի գենդերային վերլուծության՝ հասարակությունում առկա նորմերի և սպասելիքների, գենդերային դերերի, ռեսուրսների բաշխման մոդելների և կանանց և տղամարդկանց միջև իշխանական և վերահսկողական դինամիկաների դիտարկման (տե՛ս, “Global Women's Issues: Women in the World Today, extended version”,Bureau of International Information Programs, US Department of State, 2012):

Հետազոտությունները նաև ցույց են տալիս, որ այն ընտանիքները, որտեղ կան հաշմանդամություն ունեցող երեխաներ կամ չափահաս անձինք, աղքատության մեջ հայտնվելու առավել ռիսկային գոտում են, բախվում են կայուն զբաղվածություն ունենալու մեծ խոչընդոտների և հիմնականում ներգրավվում են ճկուն ժամային գրաֆիկով, բայց ցածր վարձատրվող աշխատանքներում կամ առհասարակ դուրս են մնում աշխատաշուկայից (տե՛ս, “Living with poverty: A review of the literature on children’s and families’ experiences of poverty”, Tess Ridge, 2009):

Աղքատության շուրջ ձևավորված հասարարական և պաշտոնական հռետորաբանություններում մեծ տեղ է զբաղեցնում **ամոթն ու խարանը**, որոնք հաճախ օգտագործվում են իբրև քաղաքականության գործիք՝ աղքատներին աղքատության մեջ «մեղադրելու» միջոցով (տե՛ս «Shame, stigma and policy effectiveness», R. Walker and E. Chase, Oxford Institute for Social Policy, 2015):

Աղքատ համայնքները հաճախ բնակվում են էկոլոգիապես ամենաաղտոտված և ենթակառուցվածների առկայության տեսանկյունից ամենաանբարվոք տարածքներում: Աղքատ անձինք կրում են հասանելիության մշտական սահմանափակումներ. հասանելիություն առ առողջապահություն, բարձագույն կրթություն, ստեղծագործ և արժանապատիվ աշխատանք, մշակութային և քաղաքական կյանք: Աղքատությունը հիմք է ստեղծում կարծրատիպերի, ծաղրի, խտրականության, բռնության՝ հանգեցնելով անձի մեկուսացմանը, զրկելով նրան որոշումներ կայացնելու, սեփական համայնքի և երկրի կյանքում մասնակցություն ունենալու հնարավորություններից:

Աղքատությամբ պայմանավորված՝ վերոնշյալ բոլոր անհավասարություններն ու սահմանափակումները թարգմանելի են իրավունքի լեզու և հանգեցնում են մեկ միասնական վերջնարդյունքի՝ զրկում են անհատին իր իրավունքների իրացման հնարավորություններից: **Աղքատությունը մարդու իրավունքների ոտնահարման պատճառ և հետևանք է:** Աղքատության հաղթահարմանն ուղղված ջանքերը պետք է արձագանքեն պատճառահետևանքային այս կապին և, քանի դեռ աղքատության հաղթահարման պետական քաղաքականությունները չի հանդիսանում մարդակենտրոն և իրավունքահենք, խնդրի համակարգային լուծման մասին խոսելն ավելորդ է: Սրանում է կայանում աղքատության հաղթահարման իրավունքահենք մոտեցման էությունը, և այս մոտեցման առաջխաղացումն ենք համարում անհրաժեշտ՝ Հայաստանում աղքատության կայուն և արդյունավետ հաղթահարման ճանապարհին:

Հայաստանում **աղքատության խնդրի լուծման հիմնական գործիք է առ այսօր հանդիսացել նպաստային համակարգը:** «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով նպաստների հատկացման նպատակ է հռչակված «անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելը կամ դրա վատթարացումը կանխելը» և անձի «սոցիալական ապահովության իրավունքի իրականացումը»:

Որո՞նք են խնդիրները այս համակարգի հետ: Արդյո՞ք նպաստային համակարգը, այն տեսքով, ինչպես ձևավորվել և գործել է մինչ այժմ, կարող էր դիտարկվել իբրև աղքատության հաղթահարման բավարար և համաչափ գործիք: Տվյալ հարցերի շուրջ խոսակցությունը մեկ անգամ չէ, որ ծավալվել է և շարունակում է ծավալվել փորձագիտական շրջանակներում, հասարակական կազմակերպությունների և պետական կառույցների միջև կայացող քննարկումներում և հարթակներում: Այս խոսակցությունը, սակայն, առ այսօր մշտապես շրջանցել է բուն համակարգում ընդգրկված, խնդիրը կրող անձանց: Եվ սրանում է կայանում աղքատության խնդրի շուրջ առկա դիսկուրսի ամենամեծ բացը:

2018թ. «Թավշյա» հեղափոխությունից հետո ձևավորված նոր կառավարությունը Կառավարության 2019թ.-ի ծրագրով իբրև պետական քաղաքականության ուղենիշ է դիտարկում մարդու իրավունքների պաշտպանվածությունը, ժողովրդավարությունն ու օրենքի գերակայությունը: Միևնույն ժամանակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից առաջդրված՝ «Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ռազմավարության» նախագիծը ոլորտի ռազմավարական հիմնական սկզբունք է հռչակում տվյալ ոլորտի իրավունքահենք լինելը: Ռազմավարությամբ նաև ճանաչվում է կապը մարդու իրավունքների պաշտպանության և աղքատության հաղթահարման միջև: Սրանք այն կարևոր ելակետերն են, որոնցից պետք է բխի Հայաստանում՝ իրավունքահենք մոտեցմամբ աղքատության հաղթահարման քաղաքականության կայացումը:

Մինչ այժմ, որոշում կայացնողներն առաջնորդվել են այն ենթադրությամբ, որ մինիմալ ֆինանսական հատկացումների միջոցով հնարավոր է մեղմել անձի կյանքի և կենսագործունեության վրա աղքատության ազդեցության ամբողջ բեռը և «կանխել կենսամակարդակի վատթացարումը»: Քաղաքականության մշակողները նաև չեն անդրադարձել խնդրի համակարգային էությանը. երկրում, որտեղ մշտապես առկա են եղել կրթության և առողջապահության որակի, հասանելիության և մատչելիության լրջագույն խնդիրներ, կոռուպցիա և արդարադատության անմատչելիություն, աղքատ անձանց հանդեպ թե՛ հանրային, և թե՛ մասնավոր ոլորտի ծառայություն մատուցողների կողմից դրսևորվող բացասական և խտրական վերաբերմունք, **նպաստառու անձը զրկված է մնացել իր կյանքի որակը բարելավելու, իրավունքները պաշտպանելու և լսելի լինելու հնարավորություններից:**

Աղքատության մեջ ապրող անձինք մշտապես **դիտարկվել են «օգնություն ստացողի» դերում**, և դրանով է սահմանափակվել այս անձանց հանդեպ պետության պարտավորությունների շրջանակը: Պաշտոնական հռետորաբանությունը աղքատության և դրա հաղթահարման վերաբերյալ ի սկզբանե կառուցվել է «գթասրտության» և «աջակցության» կոնցեպտների շուրջ՝ ստվերելով և դուրս մղելով քաղաքացու պահանջատիրության, քաղաքացու պահանջատիրության օրակարգը:

Աղքատության խնդիրը պետք է նորովի ընկալվի և այդ **ընկալման հիմքում պետք է լինի անձի իրավունքի և արժապատվության պաշտպանությունը**: Նպաստ համակարգն այն տեսքով, որով կա հիմա, պետք է լիովին վերափոխվի, և այդ համակարգի ձախողման մասին են վկայում մեր նախագծի շրջանակներում իրականացված փորձնական դաշտային աշխատանքների արդյունքները:

«Ինչի՞ն է նպաստում նպաստը» պատմությունների շարքն ամփոփում է տվյալների հավաքագրման փորձնական փուլից ընտրված 19 պատմություն: Պատմությունների հերոսների մեծ մասը նպաստային համակարգի շահառուներ են, մյուս մասն էլ նախկինում եղել և տարբեր պատճառներով զրկվել են օգնության հնարավորությունից, ինչը, սակայն, չի ենթադրում, որ անձը/տնային տնտեսությունը հաղթահարել է աղքատությունը:

Պատմությունների այս շարքը միտված է աղքատության իրավունքահենք ընկալման շուրջ հանրային խոսակցությունը բացելուն, աղքատ անձին ավելի լսելի դարձնելուն՝ իր խնդիրներով, տեսակետներով և պահանջներով:

Պատմությունները ցույց են տալիս աղքատության հաղթահարման անհնարինությունը առանց անձի խնդրիների համալիր դիտարկման՝ նրա զրկանքների, խոցելիությունների, իրավունքի իրացման հետ կապված մարտահրավերների հասցեագրման:

Աղքատության յուրաքանչյուր պատմություն իրավունքի խախտման պատմություն է:

Էդիկ, 67տ.
Չի կարողանում մարդամեջ դուրս գալ:



ԷԴԻԿ ԱԲԱՋՅԱՆ

«Աղքատությունը այն է, երբ մարդ չի կարողանում մարդամեջ դուրս գալ...»

Էդիկը 67 տարեկան է: Բնակվում է Երևանում՝ կնոջ հետ, սեփական բնակարանում: Էդիկը և կինը ունեն բարձրագույն կրթություն: Երկուսն էլ գործազուրկ են: 10 տարի առաջ **վաճառել են բնակարանը առօրյա ծախսերը հոգալու համար**, մնացած գումարով գնել ավելի փոքր բնակարան:

Իրենց սոցիալական կարգավիճակի պատճառը Էդիկն իր հիվանդությունն է համարում: 1998-2015 թվականներին աշխատել է Բելառուսում և վերադարձել է Հայաստան առողջական խնդիրների պատճառով: Նախկինում նաև պարտքեր ու վարկեր են ունեցել բուժման ծախսերը հոգալու պատճառով:

Ընտանիքը որևէ խնայողություն չունի: Գոնե որոշ չափով ընդունելի կենսապայմաններ ունենալու համար, Էդիկը գտնում է, որ իրենց ընտանիքին անհրաժեշտ է ամսական 150-200 հազար դրամ, մինչդեռ ներկայումս 18 հազար դրամ նպաստ են ստանում: Նպաստից բացի ամուսինները ստանում են նաև հաշմանդամության թոշակ: Երկուսն էլ սրտի կաթված են տարել և ունեն հաշմանդամություն:

Ըստ Էդիկի, **գումար չունենալը բացասական կերպով է ազդում** իր՝ հասարակական-քաղաքական և մշակութային կյանքին մասնակցության վրա: Անգամ հանրային ծառայություններ մատուցողների կողմից է երբեմն զգացել վատ վերաբերմունք իր սոցիալական կարգավիճակի պատճառով: Ընկերների շրջապատում առավել շատ են իրենից շատ ավելի վատ սոցիալական պայմաններում ապրող անձինք:

Ամուսինները բժշկի այցելում են գրեթե ամեն ամիս: Հաշմանդամության խումբը թույլ է տալիս այցելել ատամնաբուժարան անվճար, հակառակ դեպքում նման ծախս անել չէին կարող:

Էդիկն ու կինն իրենց **ֆինանսապես թույլ չեն կարող տալ** գնել այնպիսի բազային պարագաներ, ինչպիսիք են ներքնազգեստը, գիշերային հագուստը, ամառային և ձմեռային համապատասխան կոշիկն ու հագուստը: Չեն կարողանում նաև վերանորոգել սանհանգույցը:

Հավելյալ գումար ունենալու դեպքում այն կծախսեին սնունդ գնելու համար:

Յուրաքանչյուր ոք ունի արժանապատիվ կյանքով ապրելու իրավունք, որը պետք է ապահովվի պետության կողմից: ***Աղքատության յուրաքանչյուր պատմություն իրավունքների խախտման պատմություն է:***

ԻՆՉԻ՞Ն Է ՆՊԱՍՏՈՒՄ ՆՊԱՍՏԸ

Լիդա, 68տ.
Վերջին անգամ տանից դուրս է եկել երկու տարի առաջ:

ԼԻԴԱ
(անունը փոխված է)

«Աղքատությունը ցանկացած բանը գնելու անկարողությունն է...»

Լիդան 68 տարեկան է: Ունի հենաշարժողական հաշմանդամություն, որը ձեռք է բերել 1988 թվականի երկրաշարժից հետո: Երևան է տեղափոխվել 10 տարի առաջ: Ապրում է միայնակ՝ քրոջ տանը, սեփական տուն չունի: Մասնագիտությամբ մանկավարժ է, սակայն չի աշխատում:
Վերջին անգամ տանից դուրս է եկել երկու տարի առաջ:

Լիդան աղքատացել է երկրաշարժի պատճառով: Կարծում է, որ իր կենսապայմանների բարելավման համար **անհրաժեշտ է պետության կողմից սոցիալական աջակցություն:**

Բնակարանն ունի մեկ սենյակ, ջեռուցվում է գազի վառարանով: Տանը չկա մահճակալ, հագուստի և խոհանոցային պահարաններ, սեղաններ և աթոռներ, անհրաժեշտ սպասք: Լիդան չի կարող գնել կամ վերանորոգել այս իրերը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում չի կարող վերանորոգել բնակարանը:

Կոմունալներն իր փոխարեն վճարում է քույրը: Լիդան նշել է, որ կարիք ունի ավտոմատ սայլակի, սանհանգույցի վերանորոգման, նոր պատուհանների և դռների, դեղորայքի, սանիտարահիգիենիկ պարագաների և հագուստի:

Լիդայի ամսական եկամուտը կազմում է 48000 դրամ, որը, նրա պնդմամբ, չի բավարարում նվազագույն կենսապայմանների ապահովման համար: **Ունի աղբահանության համար 10500 դրամի չափով պարտք՝ գործը հասել է դատարան:** Ամսվա ընթացքում մոտ 30 հազար ծախսում է դեղորայք գնելու համար:

Որպես ծախս, որը Լիդան չի կարող հոգալ, նշել է սայլակի վերանորոգումը, տակդիրների և դեղորայքի գնումը: Լիդան առաջնային է համարում նաև խնամող ունենալը:

Լիդան պատմում է, որ իր սոցիալական կարգավիճակը բացասաբար է ազդում իր շփումների և սոցիալական կապեր ստեղծելու հնարավորության վրա՝ **մարդիկ խուսափում են իր հետ շփումից:**

Յուրաքանչյուր ոք ունի արժանապատիվ կյանքով ապրելու իրավունք, որը պետք է ապահովվի պետության կողմից: ***Աղքատության յուրաքանչյուր պատմություն իրավունքների խախտման պատմություն է:***

ԻՆՉԻ՞Ն Է ՆՊԱՍՏՈՒՄ ՆՊԱՍՏԸ

Անի, 29տ.
Շենքի խանութն ավելի շատ է օգնում, քան պետությունը:

ԱՆԻ ԵՂԻԿՅԱՆ

«Աղքատությունը շատ վատ ապրելն է, երբ երեխադ աչքիդ առաջ սոված է մնում...»

Անին 29 տարեկան է: 2012 թվականից ստանում է ընտանեկան նպաստ՝ 34500 դրամ: Անիի կարծիքով Հայաստանում **աղքատներին ծաղրում են,** իսկ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին վատ են վերաբերվում: Որպես աղքատության պատճառ նշում է ընտանիքի անդամների աշխատել չկարողանալը:

Ընտանիքում 2 չափահաս կա, մեկ տարեց և 3 անչափահաս: Կացարանում չկա լոգասենյակ, զուգարան, ջուր. ջրի աղբյուրը ջրհորն է: Գազը անջատված է պարտքերի պատճառով՝ տունը ջեռուցում են պլիտայով, փայտով կամ այն ամենով, ինչ կարող են օգտագործել իբրև կոշտ վառելիք:

Կոմունալները չվճարելու պատճառով ընտանիքը հաճախ մնում է առանց ջրի, հոսանքի, ինտերնետի: Եղել է, որ նրանց **կացարանից վտարեն բնակարանի վարձակալության և կոմունալ վճարները չվճարելու պատճառով:** Ամսական ծախսերի մեծ մասը պարտքերն ու վարկերն են՝ մոտ 200 հազար դրամ:

Հաճախ լինում է, որ ընտանիքը, այդ թվում երեխաները, քաղցած են մնում: Հաճախ սնունդը գնելիս պարտք են անում խանութից: Ներկա պահին ունի սնունդ գնելու համար վերցված 30 հազար դրամ պարտք:

Անին պատմում է, որ լինում են դեպքեր, **երբ երեխաները չեն գնում դպրոց՝ կոշիկ և հագուստ չունենալու պատճառով:** Ավագ աղջիկը, ով ութ տարեկան է, հաճախ տնային գործերով է զբաղվում՝ պատրաստում է օրվա սնունդը, օգնում է տանը մաքրություն անել: Ավագ աղջիկն ու տղան նաև պատասխանատու են փոքր երեխայի խնամքի համար:

Անին նշում է, որ Հայաստանում հնարավոր է դուրս գալ աղքատությունից, եթե աշխատատեղեր բացվեն և պետությունը իջեցնի ապրանքների և ծառայությունների գները:

Անին միջնակարգ կրթություն ունի: Իր կրթական մակարդակի պատճառով աշխատավայրում արժանացել է բացասական վերաբերմունքի, հայտնվել է վատ շրջապատում և **ստիպված է եղել կատարել վատ և շահագործող պայմաններով աշխատանք:** Անին դադարեցրել է աշխատանքը ընտանիքի անդամների խնամքով զբաղվելու համար՝ խնամում է երեխաներին և ամուսնու մորը, ով անկողնային հիվանդ է:

Յուրաքանչյուր ոք ունի արժանապատիվ կյանքով ապրելու իրավունք, որը պետք է ապահովվի պետության կողմից: ***Աղքատության յուրաքանչյուր պատմություն իրավունքների խախտման պատմություն է:***

ԻՆՉԻ՞Ն Է ՆՊԱՍՏՈՒՄ ՆՊԱՍՏԸ

Շուշան, 43տ.
12 տարի ապրել է բռնության մեջ:

ՇՈՒՇԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Որ կողմ գնում եմ, կանգնում եմ այն փաստի առաջ, որ գումար է պետք...»

Շուշանը 43 տարեկան է: Մասնագիտությամբ մանկաբարձուհի է, «Էրեբունի» ԲԿ-ում աշխատելու 7 տարվա աշխատանքային փորձ ունի: 31 տարեկանում ամուսնացել և ամուսնու հետ տեղափոխվել է Ռուսաստան, որտեղ **ամուսինը շուրջ 12 տարի ենթարկել է բռնության, թույլ չի տվել աշխատել, հանդիպել մարդկանց հետ, դուրս գալ տանից:**

2019թ. հուլիսին Շուշանը երեխաների հետ փախչել է և եկել Հայաստան: Այժմ ապրում է ծնողների տանը՝ հոր, մոր, եղբոր, եղբոր կնոջ, նրանց 2 երեխաների և իր 3 երեխաների հետ: Տանը ոչ ոք չի աշխատում:

Շուշանը չի կարող ձևակերպել միայնակ մոր նպաստ, քանի որ երեխաները ՌԴ գրանցում ունեն, և նախկին ամուսինը պետք է հրաժարվի հայրությունից: Նա Հայաստանում չէ, իսկ երկրում լինելու դեպքում էլ, Շուշանը վստահ է, որ չէր հրաժարվի:

Շուշանն ասում է, որ **ապրում է մշտական վախի մեջ, որ ամուսինը կվերադառնա Հայաստան, կհետապնդի և կվնասի իրենց:**

Շուշանի փոքր տղան շաքարային դիաբետ ունի: Շուշանը պատմում է, որ երեխան հիվանդացել է բռնության մեջ ապրելու արդյունքում: Որդու խնամքը դժվարացնում է աշխատանք գտնելը՝ «**Ես ման եմ գալիս, բայց ահավոր դժվար ա իմ աշխատանք գտնելը:** Իմ խնդիրը տղաս ա՝ երկու ժամը մեկ շաքարն եմ չափում, չորս ժամը մեկ սրսկում եմ: Կարող եմ անցնել սմենային աշխատանքի, որն առավոտյան ութից մինչև հաջորդ օրը ութն ա: Էդ ամբողջ օրը իմ երեխային ո՞վ յոլա տանի: Ո՞վ սրսկի, ո՞վ կերակրի, ո՞վ նայի: Դա դիաբետ ա, թողես շատ կիջնի, երեխան կընկնի կոմայի մեջ և վերջ: Շատ բարձրն էլ օրգաններն ա սկսում քայքայել»:

Շուշանը պատմում է, որ ծնողների տանն իրեն լավ են վերաբերվում, բարեկամները հագուստ են տրամադրում իրեն ու երեխաներին: Երեխաները հաճախում են «Օրրան» բարեգործական կազմակերպություն՝ սնունդ ստանալու և ցերեկային դասընթացներին մասնակցելու համար:

Շուշանը փորձել է գրանցվել նպաստ ստանալու համար, բայց, ինչպես ինքն է պատմում, «ասել են մինչև հորդ տանից դուրս չգաս, այդ գումարը չենք կարող տալ: Իսկ ես ու՞ր գնամ: Տուն վարձեմ, տան վարձը ամենաքիչը 60 հազար է լինելու, ես էդ 30 հազարով ինչպե՞ս տան վարձ տամ»:

Յուրաքանչյուր ոք ունի արժանապատիվ կյանքով ապրելու իրավունք, որը պետք է ապահովվի պետության կողմից: ***Աղքատության յուրաքանչյուր պատմություն իրավունքների խախտման պատմություն է:***



ԻՆՉԻ՞Ն Է ՆՊԱՍՏՈՒՄ ՆՊԱՍՏԸ

Անդրանիկ, 66տ.
Սեփական ոչ մի իր չունի,
օգտագործում է քրոջ իրերը:

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Աղքատությունը գումար և ընտանիք չունենալն է...»

Անդրանիկը 66 տարեկան է, ծնվել և մշտապես բնակվել է Երևանում: 1988-1994 թվականներին մասնակցել է Արցախյան պատերազմին: Ունի միջնակարգ կրթություն:

Ներկա պահին չի աշխատում. գործազուրկ է 2014 թվականից սկսած: Նախկինում աշխատել է որպես կոշկակար: Աշխատանքից հեռանալը պայմանավորված է եղել առողջական ծանր վիճակով: Իր աղքատության պատճառներից նշում է պատերազմը, եղբոր մահը և սրտի վիրահատությունը:

Անդրանիկը երբեք ամուսնացած չի եղել՝ ներկա պահին ապրում է քրոջ տանը: Սեփական **բնակարանը վաճառել է սրտի վիրահատության ծախսերը հոգալու համար:**

Սեփական ոչ մի իր չունի, օգտագործում է քրոջ իրերը: Մինչև քրոջ տուն տեղափոխվելը հաճախ եղել են դեպքեր, երբ կոմունալները, բնակարանի վարձը չվճարելու պատճառով մնացել է դրսում:

Ամսական եկամուտը կազմում է 53 հազար դրամ, որից 35 հազար դրամը կենսաթոշակն է, իսկ 18000 դրամը՝ նպաստը: Այս գումարով հնարավոր չէ հոգալ ո՛չ սննդի, ո՛չ էլ դեղորայքի ծախսերը: Ամսվա ընթացքում դեղերի ու բժշկի այցելությունների ծախսերը կազմում են մոտ 35 հազար դրամ: Տարվա մեջ մոտ մեկ ամիս անցկացնում է հիվանդանոցում: Վճարովի բժշկական ծառայություններ իրեն թույլ տալ չի կարող, իսկ ատամնաբուժարան այցելում է շատ հազվադեպ:

Առողջական խնդիրների պատճառով Անդրանիկին անհրաժեշտ է դիետիկ սնունդ, սակայն կարողանում է սնվել միայն նպարեղենով, երբեմն նույնիսկ նպարեղեն ու ամենօրյա դեղորայք գնելն է ֆինանսապես անհնար: Անդրանիկը ասում է, որ **այլևս քայլեր չի ձեռնարկում իր պայմանները բարելավելու ուղղությամբ**, պարզապես ի վիճակի չէ:

Հավելյալ գումար ունենալու դեպքում այն կծախսեր սննդի, հագուստի և դեղորայքի գնման համար:

Յուրաքանչյուր ոք ունի արժանապատիվ կյանքով ապրելու իրավունք, որը պետք է ապահովվի պետության կողմից: ***Աղքատության յուրաքանչյուր պատմություն իրավունքների խախտման պատմություն է:***

ԻՆՉԻ՞Ն Է ՆՊԱՍՏՈՒՄ ՆՊԱՍՏԸ

Սուսաննա, 27տ.
Բժշկի կամ չի գնում կամ գնում է միայն ծայրահեղ դեպքերում:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ

«Հայաստանում աղքատ մարդուն վատ են վերաբերվում, երբ նա փորձում է որևէ պետական ծառայություն ստանալ...»

Սուսաննան 28 տարեկան է: Ապրում է ամուսնու և երեք երեխաների հետ՝ վարձով: Սուսաննայի սահմանմամբ աղքատությունը բնակարան չունենալն ու անհրաժեշտ իրեր գնելու անկարողությունն է: Պնդում է, որ **Հայաստանում հնարավոր չէ դուրս գալ աղքատությունից:**

Սուսաննան ունի միջին մասնագիտական կրթություն, իր կրթական մակարդակի պատճառով չի կարողացել գտնել աշխատանք: Ցանկանում է շարունակել ուսումը, սակայն ներկայումս չունի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Երբեք չի ունեցել աշխատանք՝ զբաղվել է երեխաների խնամքով:

Ընտանիքն իրեն չի կարող թույլ տալ գնել կամ նորոգել երկարաժամկետ օգտագործման որևէ իր կամ վերանորոգել բնակարանը: Չեն կարող նաև գնել մսամթերք, դեղորայք, խնամքի պարագաներ, ներքնազգեստ, գիշերային հագուստ, սեզոնային կոշիկ, հագուստ և այդպես շարունակ: **Հաճախ երեխաների հագուստով օգնում են բարեկամները:**

Սուսաննան ստանում է երեխայի խնամքի նպաստ: Ընտանիքը հաճախ պարտք և վարկ է վերցնում կոմունալ վճարների, կացարանի վարձի և նախկին պարտքերի ու վարկերի մարման համար: Ամսական **ծախսերի մեծ մասը կազմում են վարկերն ու պարտքերը՝** մոտ 100 հազար դրամ և կացարանի վարձակալությունը՝ 60 հազար դրամ: Ողջ ընտանիքի սննդին հատկացվող գումարը 30 հազար դրամ է: Կոմունալ վճարները ամռանը կազմում են 12 հազար դրամ, իսկ ձմռանը՝ 28 հազար դրամ:

Սուսաննան ունի երակային վարիկոզ, որն այս պահին պահանջում է բուժման ծախսեր: Ընտանիքը առողջական խնդիրներ ունենալու դեպքում կամ չի այցելում բժշկական հաստատություններ, կամ այցելում է միայն առողջական ծայրահեղ խնդիր ունենալու դեպքում:

Սուսաննայի կարծիքով պետությունը աղքատության վերացման համար պետք է մարդկանց ապահովի տներով, իսկ աղքատությունից զերծ պահելու համար պետք է իջեցվեն սննդի և բնակարանների վարձակալության գները:

Ըստ Սուսաննայի՝ սոցիալական անապահովության պատճառով խախտվում են առողջության, հանգստի, կրթության իրավունքը, ինչպես նաև երեխաների առողջության պահպանման և սնուցման իրավունքները:

Յուրաքանչյուր ոք ունի արժանապատիվ կյանքով ապրելու իրավունք, որը պետք է ապահովվի պետության կողմից: ***Աղքատության յուրաքանչյուր պատմություն իրավունքների խախտման պատմություն է:***



ԻՆՉԻ՞Ն Է ՆՊԱՍՏՈՒՄ ՆՊԱՍՏԸ

Շաքե, 74տ.
Ընտանիքով տանից դուրս չեն գալիս, որովհետև շոր չունեն:

ՇԱՔԵ

(անունը փոխված է)

«Աղքատությունը ընտանիքի պահանջները բավարարելու անկարողությունն է..»

Շաքեն 74 տարեկան է: 2010 թվականից ստանում է սոցիալական նպաստ: Ամուսինը մահացած է: Կացարանում Շաքեից բացի բնակվում են ևս 4 անձ: Բոլորը գործազուրկ են: Որպես իր աղքատության պատճառ նշում է իր և ընտանիքի այլ անդամների աշխատել չկարողանալը:

Ընտանիքի ամսական եկամուտները կազմվում են նպաստից, կենսաթոշակից և **բարեկամների դրամական օգնություններից՝** ընդհանուր 90 հազար դրամ: Ընտանիքն ունի 400 հազար դրամի պարտքեր և վարկեր: Ամսական **ծախսերի մեծ մասը կազմում է սննդի ձեռքբերումը՝** 50 հազար դրամ և վարկերի ու պարտքերի մարման ծախսերը՝ 31 հազար դրամ:

Շաքեն և ընտանիքի այլ անդամները տաքսի ծառայություններից օգտվում են ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, իսկ սրճարաններից, սննդի հանրային վայրերից, մշակութային վայրերից, մարզասրահներից և վճարովի **բժշկական ծառայություններից չեն օգտվում ընդհանրապես** գումարի բացակայության պատճառով:

Ընտանիքը ֆինանսապես հնարավորություն չունի նաև գնելու մսամթերք, ծովամթերք, հրուշակեղեն և քաղցրավենիք, ատամի մածուկ, օճառ, խոզանակ, լվացքի փոշի, միջադիր, տակդիր, պարբերաբար գործածվող դեղորայք և այլ պարագաներ: **Հաճախ սնունդ ձեռք է բերում պարտքով:** Լինում են իրավիճակներ, երբ ընտանիքի անդամները չեն կարող տանից դուրս գալ անհրաժեշտ հագուստ և կոշիկ չունենալու պատճառով:

Շաքեն նշում է, որ **հավելյալ գումար ունենալու դեպքում այն կծախսեր երեխաների համար սնունդ գնելու նպատակով:**

Ըստ Շաքեի՝ Հայաստանում **աղքատության հաղթահարման համար պետք են նոր աշխատատեղեր**, կենսաթոշակների բարձրացում, իսկ սոցիալական **անապահովության պատճառով խախտվում են մարդու առողջության և կրթության իրավունքները:**

Յուրաքանչյուր ոք ունի արժանապատիվ կյանքով ապրելու իրավունք, որը պետք է ապահովվի պետության կողմից: ***Աղքատության յուրաքանչյուր պատմություն իրավունքների խախտման պատմություն է:***

Նշան և Աշխեն
Հաճախ ամուսինները թերսնվում են, որպեսզի թոռը սոված չմնա:



ՆՇԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱՇԽԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

«Աղքատությունը էն ա, որ մարդ չի կարողանում իրեն լիարժեք մարդ զգալ...»

Նշանը խոսելու հետ կապված խնդիրներ ունի, իսկ Աշխենը կաթված է տարել: Երկուսն էլ հաշմանդամության խումբ ունեն: Իրենց աղքատության պատճառն են համարում պետության կողմից անտեսված լինելը, սոցիալական պաշտպանության բացակայությունը:

Ընտանիքում ապրում են ամուսինները, նրանց որդին՝ 45տ. և թոռնիկը՝ 17տ.: Ստանում են 23500 դրամ նպաստ և 38000 դրամ թոշակ: Տարեց անձինք **հաճախ թերսնվում են՝** թոռան համար բավարար սնունդ ապահովելու համար: Մթերք ձեռք բերելու համար հաճախ պարտք են մնում: Մսամթերք իրենց թույլ են տալիս միայն հատուկ առիթներով:

Առաջին անհրաժեշտության իրերից ունեն լվացքի փոշու կարիք: Մեծ խնդիր ունեն հագուստի ձեռքբերման հետ: Թոռնիկի համար կարողանում են հոգալ միայն սեզոնային հագուստի և կոշիկի կարիքները: Նրան չեն կարող որևէ վճարովի խմբակ ուղարկել, բայց շատ կցանկանային:

Նպաստից և թոշակից ստացվող գումարը կենսական կարիքներին որևէ կերպ չի հերիքում: Ունեն 60 հազար դրամի պարտք: Անգամ 55 հազար դրամի չափով անսպասելի որևէ ծախս իրենց թույլ տալ չեն կարող:

Աղքատացել են առողջական խնդիրների արդյունքում: Առաջնային խնդիրներ են համարում առողջական խնդիրները հոգալու և թոռան համար որակյալ կրթություն ապահովելու անհնարինությունը, բնակարանային պայմաններն ու սննդի գումար չունենալը:

Իրենց վիճակը բարելավելու համար այլևս քայլեր չեն ձեռնարկում: Իրենց **խնդիրների լուծումը չեն պատկերացնում:** Աշխատանք ևս չեն փնտրում, որովհետև աշխատել ի վիճակի չեն:

Աշխենն ասում է, որ իրենց սոցիալական կարգավիճակից ամաչում է: Եթե պետության կողմից կազմակերպվեին անվճար մշակութային միջոցառումներ, ապա սիրով կայցելեր: **Ժամանցի կազմակերպման որևէ հնարավորություն չունեն՝** ոչ իրենց, ոչ էլ թոռնիկի համար:

Ունեն հոգեբանական խորհրդատվության և աջակցության կարիք:

Գրքույկի հրամապարակման նախաշեմին տեղեկացանք, որ Նշանը մահացել է:

Յուրաքանչյուր ոք ունի արժանապատիվ կյանքով ապրելու իրավունք, որը պետք է ապահովվի պետության կողմից: ***Աղքատության յուրաքանչյուր պատմություն իրավունքների խախտման պատմություն է:***



ԻՆՉԻ՞Ն Է ՆՊԱՍՏՈՒՄ ՆՊԱՍՏԸ

Օվսաննա, 67տ.
Գրեթե ամեն օր խաշած կարտոֆիլ է ուտում:

ՕՎՍԱՆՆԱ ՄԿՈՅԱՆ

«Աղքատությունը ոչ մի բանից օգտվել չկարողանալն է...»

Օվսաննան 67 տարեկան է: Ամուրի է: Բնակվում է պետության կողմից հատկացված սոցիալական կացարանում: Օվսաննան պատմում է, որ 1996թ.-ին **խաբեության արդյունքում իրենցից խլել են իրենց բնակարանը**, որից հետո մինչև 2013թ. հաճախ գիշերել է դրսում:

Օվսաննան միայն ամիսը մեկ անգամ է կարողանում մսամթերք գնել, շաբաթը մեկ էլ՝ միրգ ու բանջարեղեն: Հաճախ թերսնվում կամ քաղցած է մնում գումար չունենալու պատճառով: **Նաև հաճախ պարտք է մնում խանութին:** Երբեմն օգնում են բարեկամներն ու հարևանները: Բողոքում է, որ սնունդի հիմնական մասը կազմում է խաշած կարտոֆիլը:

Լինում են իրավիճակներ, երբ տանից դուրս չի գալիս հագուստ և կոշիկ չունենալու պատճառով: Օվսաննայի ամսական եկամուտը կազմում է 42 հազար դրամ՝ թոշակը և նպաստը: Հաճախ չի կարողանում գնել անհրաժեշտ դեղորայք և սնունդ, հիգիենայի պարագաներ և հագուստ: Տաքսիներից, հանրային սնդի կետերից, մշակութային վայրերից նույնպես չի կարող օգտվել գումարի բացակայության պատճառով:

Իր աղքատության պատճառը նշում է տան հետ կապված միջադեպը, որից հետո նաև մահացել է ամուսինը: **Աղքատության հաղթահարման համար անհրաժեշտ է համարում պետության կողմից սոցիալական աջակցությունը:** Օվսաննան բուժում ստանալու ակնկալիքով դիմել է քաղաքապետարան և Գագիկ Ծառուկյանին: Երկու դեպքում էլ մերժել են: Պատմում է, որ եթե ժամանակին ունենար իրավաբանական խորհրդատվություն, այս վիճակում չէր հայտնվի: Բարեկամների, ծանոթների հետ գրեթե չի շփվում՝ տարին մեկ-երկու անգամ: Ասում է, որ հաճախ իր սոցիալական կարգավիճակի հետ կապված խտրական վերաբերմունք է զգում հենց հարազատներից, քան անծանոթներից:

Առողջության հետ խնդիրները շատ են՝ ողնաշարի, ոտքերի, ստամոքսի հետ կապված տարբեր հիվանդություններ ունի: Ամսվա ընթացքում մոտ 10-15 հազար դրամ ծախսում է դեղորայք գնելու համար: Աղքատության պատճառով, ըստ Օվսաննայի, հաճախ խախտվում են մարդու առողջ լինելու իրավունքը:

Հավելյալ գումար ունենալու դեպքում Օվսաննան կգնար ծով՝ հանգստանալու:

Յուրաքանչյուր ոք ունի արժանապատիվ կյանքով ապրելու իրավունք, որը պետք է ապահովվի պետության կողմից: ***Աղքատության յուրաքանչյուր պատմություն իրավունքների խախտման պատմություն է:***

Թագուհի, 33տ.
Ծնողները զբաղվել են մուրացիկությամբ, երեխաներին նույնպես մասնակից են դարձրել:

ԹԱԳՈՒՀԻ ՍԱՀԱԿՅԱՆ

«Ես ինձ համարում եմ աղքատ, քանի որ ոչինչ չունեմ. չկա մի մարմին, որն ինձ առաջ կտանի...»

Թագուհին ապրում է չորս երեխաների և ամուսնու հետ: Էլիտար շենքերում մաքրություն է անում ամսական 30 հազար դրամով, հաճախ լրացուցիչ գործեր է անում, որ երեխաներին կրթությունից չկտրի: Ամուսինը շինարար է, աշխատանքը սեզոնային է, երբեմն երկար ժամանակ գործ չի ունենում:

Ընտանիքը սնվում է հացաբուլկեղենով, նպարեղենով: **Երբեմն 4-6 օր ողջ ընտանիքը սոված է մնում:** Թագուհուն ու երեխաներին հագուստով օգնում են բարեգործական ընկերությունները, բայց ամուսնու համար չեն կարողանում հագուստ գնել: Ունեցել են վարկեր, բայց հեղափոխությունից հետո դրանք չեղարկվել են. ընտանիքը ճանաչվել է սնանկ:

Երկու ամուսինները վճարովի բուժում պահանջող առողջական խնդիրներ ունեն: Իսկ դուստրը աչքի վիրահատության կարիք ունի, որի ծախսը նույնպես ընտանիքը չի կարող իրեն թույլ տալ: «Արդեն 6 ամիս է սկի 6 դրամ չունենք, ուր մնաց թե 600 հազար ունենանք»:

Թագուհին պատմում է, որ **փոքր տարիքում թե՛ իր, թե՛ ամուսնու ծնողները զբաղվել են մուրացիկությամբ ու իրենց ևս մասնակից են դարձրել:** Հիմա փորձում են երեխաներին ապահովել այն ամենով, ինչ իրենք չեն ունեցել: 10 տարի է մուրացիկությամբ չեն զբաղվում: «Այսօր ես ինչ ունեմ մուրացկանության շնորհիվ ա, եթե տուն եմ կառուցել՝ դրա շնորհիվ ա, եթե ունեմ պատեր, որ ո՛չ ճաքում են, ո՛չ կարիճ ու օձ ա դուրս գալիս արանքից, եթե իմ երեխան երբ ուզում լողանում ա՝ դրա շնորհիվ ա»:

«Հասարակության մեջ շատ ա էդ վատ վերաբերմունքը, որ «վայ, չունես...»: Աղջիկս 10 տարի սովորեց դպրոցում, անգամ կողքի նստողի անունը չգիտեր: Տարիներ առաջ սկեսուրս մեզ տարավ «Կիսաբաց լուսամուտներ», դարձանք բոլորի ծաղրուծանակը: **Աղջկաս հետևից գոռացել են կիսաբացի գժեր**: Էդ ամենի պատճառով իրանք փակվում են, դաս չեն պատասխանում»: Կարծում է, որ վատ վերաբերմունքը հաղորդմանը մասնակցելու և վատ պայմաններում ապրելու պատճառով է:

2013թ.-ից բազմազավակության նպաստ է ստանում (44 հազար դրամ): Թագուհին կարծում է, որ նպաստ համակարգը այլ կերպ պետք է աշխատի, **նպաստը չպետք է կտրեն այնքան ժամանակ մինչև մարդը ոտքի կանգնի:**

Յուրաքանչյուր ոք ունի արժանապատիվ կյանքով ապրելու իրավունք, որը պետք է ապահովվի պետության կողմից: ***Աղքատության յուրաքանչյուր պատմություն իրավունքների խախտման պատմություն է:***

ԻՆՉԻ՞Ն Է ՆՊԱՍՏՈՒՄ ՆՊԱՍՏԸ

Աննա, 46տ.
Գյուղում իր երեխաների հետ ոչ ոք չի շփվում:

ԱՆՆԱ
(անունը փոխված է)

«Միայն տուն եմ ցանկանում, թեկուզ փլված, որ գոնե վարձ չտամ: Մեկ էլ երեխաների առողջական հարցերը լուծվեն...»

Աննան 46 տարեկան է: Ապրում է Էջմիածնում՝ ամուսնու և 2 աղջիկների հետ, վարձով: **Տղային վերջերս տարել է մանկատուն**, քանի որ որդու հոգեկան խնդիրների պատճառով չի կարողանում խնամել նրան տան պայմաններում: Ընտանիքը ապրում է ծայրահեղ աղքատ պայմաններում:

Ընտանիքի եկամուտը կազմում են 24 հազար դրամ աղքատության ընտանեկան նպաստը և 25 հազար դրամ հաշմանդամության թոշակը: Տան վարձը 20 հազար դրամ է, մնացածը հազիվ հերիքում է սննդի:

Տանը ջուր չկա՝ բերում են բակի ցայտաղբյուրից: Ձմռանը ջեռուցում են փայտի վառարանով: Տանը ցուրտ է, պատուհանները ջարդված են: Տան բոլոր իրերը տան տիրոջ սեփականությունն են՝ Աննան միայն սպասք ունի: Ընտանիքը հաճախ **սնունդը պարտքով է գնում:** Հագուստ գնել նունպես չի կարող, հիմնականում օգնության տեսքով են ստանում:

Մտավոր հաշմանդամություն ունեցող՝ **14 տարեկան աղջկան անցած տարի բռնաբարել են դասարանցիները,** որից հետո նա հղիացել և ծննդաբերել է. նորածնին հանձնել են մանկատուն: Աննան և աղջիկը հոգեբանական և իրավաբանական աջակցություն են ստանում «Սեռական բռնության չգնաժամային կենտրոն» ՀԿ-ի կողմից: Բայց անգամ Էջմիածնից Երևան գալու տրանսպորտի ծախսը հոգալը Աննան չի կարող: Կրկին աջակցում է կազմակերպությունը:

Մյուս աղջիկը նույնպես առողջական խնդիրներ ունի, կլինիկական մահ է տարել: Աննան նույնպես առողջական խնդիրներ ունի, **երկար ժամանակ ջուր կրելու պատճառով** վերջերս վզի վիրահատություն է տարել:

Աննան համարում է, որ աղքատությունից կկարողանար դուրս գալ, եթե բնակարան ունենար, վարձավճար չտար և ընդունելի բնակարանային պայմաններում մեծացներ երեխաներին: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը դիմել է տան հարցով, սակայն մերժվել է:

Գյուղում **երեխաների հետ ոչ ոք չի շփվում,** հաճախ ծաղրում են աղքատ լինելու պատճառով: Բռնաբարության դեպքից հետո բարեկամները ևս դադարել են իրենց հետ շփումը: Աննան ասում է, որ աղջկա հետ պատահածից հետո «աչքը վախեցել ա» և մյուս աղջկան 9-րդ դասարանից հետո դպրոցից հանելու է:

Յուրաքանչյուր ոք ունի արժանապատիվ կյանքով ապրելու իրավունք, որը պետք է ապահովվի պետության կողմից: ***Աղքատության յուրաքանչյուր պատմություն իրավունքների խախտման պատմություն է:***

Գայանե, 48տ.
Մանկատանը իրեն փայտով ծեծում էին:

ԳԱՅԱՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

«Էդ մանկատուն չէր, համակենտրոնացման ճամբար էր՝ մեզ փայտով ծեծում էին: Պետությունը աղքատության հաղթահարման համար պետք է բնակարաններով և աշխատանքով ապահովի մանկատան երեխաներին...»

Գայանեն 48 տարեկան է: Բնակվում է հանրակացարանում, որի հիմնական բնակիչները մանկատան սաներ են եղել: Սենյակն իրեն հատկացվել է առանց սեփականության իրավունքի: Այստեղ ապրում է մանկատնից դուրս գալուց ի վեր:

Կացարանի հետ կապված բողոքները շատ են՝ տրանսպորտի անհասանելիությունը, տարածքի քչությունը, խոնավությունը, վատ ջրամատակարարումը, աղբահանությունը, լուսավորությունն ու ջեռուցումը: 1 սենյականոց կացարանի պատերը խոնավությունից փտած են, իսկ պատուհանների փոխարեն պոլիէթիլենային տոպրակներ են: Խոհանոցը, բաղնիքն ու զուգարանը ընդհանուր են բոլոր բնակիչների համար և ծայրահեղ վատ վիճակում են: Գայանեն ասում է, որ ձմռանը անհնար է լողանալ: Շենքում գազ չկա, նաև շաբաթներով հոսանք չի լինում:

Գայանեն ապրում է 25տ. որդու հետ, ով ունի առողջական խնդիրներ և սրտի վիրահատության կարիք: Մյուս որդին (28տ.) ամուսնացած է, ապրում է առանձին: Արդեն 10 տարի է Գայանեն չի ստանում նպաստ, քանի որ տղաները չափահաս են, չնայած, որ մեկը չի աշխատում առողջական խնդիրների պատճառով, իսկ մյուսը «հազիվ իր ընտանիքն ա յոլա տանում»:

Գայանեն աշխատում է Երևանի ճարտարագիտական քոլեջում որպես մաքրուհի, ստանում է 55 հազար դրամ: Սնունդ հաճախ ձեռք է բերում պարտքով. այս պահին խանութին պարտք է 20 հազար դրամ: Առողջական խնդիրներ շատ ունի՝ խնդիրներ ողնաշարի հետ, ձեռքը հաճախ քարանում է, ինչի պատճառով մաքրուհի աշխատելը ևս մեծ դժվարություն է:

Գայանեն վստահ է, որ Հայաստանում աղքատ լինելը ամոթ է, աղքատներին ծաղրում և վատ են վերաբերվում, երբ նրանք փորձում են որևէ պետական ծառայություն ստանալ: Իր կարծիքով հնարավոր է դուրս գալ աղքատությունից, «եթե Նիկոլը աշխատի»: Կարծում է, որ իր վիճակի համար պատասխանատու են Սերժ Սարգսյանն ու Ռոբերտ Քոչարյանը:

Գայանեն պատմում է, որ երբեմն մտածել է ինքնասպանություն գործել, սակայն հասկացել է, որ երեխաները կմնան մանկատանը, իսկ նման կյանք երեխաների համար ինքը չի ցանկանում: Ասում է, որ մանկատան պատճառով կորցրել է առողջությունը, չի ստացել կրթություն ու երբևէ չի գտել բավարար վարձատրվող աշխատանք:

Յուրաքանչյուր ոք ունի արժանապատիվ կյանքով ապրելու իրավունք, որը պետք է ապահովվի պետության կողմից: ***Աղքատության յուրաքանչյուր պատմություն իրավունքների խախտման պատմություն է:***

Անուշ
Տրանսպորտի անհասանելիության պատճառով ստիպված է լինում երկու-երեք տրանսպորտ փոխել:

ԱՆՈՒՇ

(անունը փոխված է)

«Հայաստանում աղքատ լինելը ամոթ է: Աղքատ երխաներին վատ են վերաբերում, նրանց դժվար է ընկերներ ձեռք բերել: Աղքատներին մեղադրում են աղքատության մեջ...»

Անուշն ընտանիքի հետ ապրում է սոցիալական կացարանում: Ընտանիքը մեծ է, 13 հոգի՝ հայրը, մայրը, չորս քույրերն ու յոթ եղբայրները. հինգը անչափահաս են: Նախկինում ստացել են նպաստ, սակայն այժմ ընտանիքի անդամներից երկուսի աշխատելու պատճառով զրկվել են նպաստից:

Երեխաներից երկուսը սովորում են բուհում վճարովի սկզբունքով, երկուսը քոլեջում են, երկուսն էլ դպրոցում: Դպրոցականները հաճախ դասի չեն գնում՝ կոշիկ, վերարկու և տրանսպորտի գումար չունենալու պատճառով:

Տանը փոշեկուլի, համակարգչի, մանկական կահույքի կարիք կա: Հաճախ կոմունալները չվճարելու պատճառով ընտանիքը մնում է առանց գազի և հոսանքի: Խնդիր է տրանսպորտի հասանելիությունը: **Հաճախ ստիպված են լինում 2-3 տրանսպորտ փոխել:** Տան հետ կապված բողոքները շատ են՝ կաթացող տանիք, վատ լուսավորություն, ջեռուցման պակաս, մակերեսի սակավություն, վատ ջրամատակարարում, խոնավություն:

Ընտանիքը չի կարող իրեն թույլ տալ գնել մսամթերք, հյութ, կաթնամթերք, միրգ: Սովորաբար սնունդը պարտքով են գնում, **ընտանիքը, ներառյալ երեխաները, հաճախ մնում են քաղցած:** Ընտանիքի համար դժվար է հոգալ առողջական ծախսերը, բժշկական ծառայություններից օգտվում են ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: Չեն կարող գնել նաև անհրաժեշտ դեղորայք: Հագուստով հաճախ օգնում են ծանոթներն ու բարեկամները: Անուշը ունի 400 հազար դրամի վարկ, որը վերցրել են ջեռուցման համակարգ տեղադրելու և ընտանիքի առօրյա ծախսերը հոգալու համար:

Անուշը պատմում է, որ իր **սոցիալական կարգավիճակի պատճառով հայտնվել է դեպրեսիայի մեջ:**

Անուշն ունի բարձրագույն կրթություն, նախկինում աշխատել է, հիմա զբաղված է մոր (մայրը ունի երիկամների խնդիր) և ընտանիքի անչափահաս 5 երեխաների խնամքով:

Նա նշում է, որ աղքատությունը հաղթահարելու համար պետությունը պետք է աշխատատեղեր ստեղծի, աշխատավարձերը բարձրացնի, ուշադրություն դարձնի աղքատ բնակչությանը, ինչպես նաև տարբեր համայնքներում հետազոտությունների միջոցով պարզի, թե ինչ կարիքներ ունեն այդ մարդիկ:

Անահիտ, 40տ.
Մի քանի անգամ տանից դուրս են արել վարձավճարի պարտքի պատճառով:

ԱՆԱՀԻՏ ԲԱԲԱՅԱՆ

«Հայաստանում հնարավոր չէ դուրս գալ աղքատությունից, քանի որ պետական գործարանները դարձել են մասնավոր, և աշխատողը պարտավոր է կատարել քիչ վարձատրվող, շատ ժամերով, շահագործող աշխատանք...»

Անահիտը 40 տարեկան է: Ունի միջնակարգ կրթություն: Ապրում է ամուսնու, սկեսրոջ և երկու անչափահաս տղաների հետ՝ վարձով: Ունի նաև երկու չափահաս աղջիկ, ովքեր ամուսնացած են: Ամուսինը գործազուրկ է, սրտի վիրահատությունից հետո աշխատունակ չէ:

Անահիտը նախկինում ստացել է բազմազավակության նպաստ (իբրև 4 երեխայի մայր): Աղջիկների չափահասության լրանալուց հետո **ընտանիքը այլևս նպաստ չի ստանում:**

Տան վարձը 75 հազար դրամ է, սեփական բնակարան ընտանիքը չունի: Տունը բավականին փոքր է և բազմաթիվ ճաքեր ունի. տանիքը հոսում է: Տանը գազ չկա, ձմռան ամիսներին տաքացնում են էլեկտրական պլիտայով:

Ընտանիքին **մի քանի անգամ կացարանից դուրս են հանել վարձավճարի պարտքի պատճառով:** Այս բնակարանում ևս չեն կարող երկար մնալ՝ սեփականատերը պատրաստվում է այն վերանորոգել: Նախկինում ունեցել են բնակարան, որը վաճառել են բիզնես անելու նպատակով, բայց խաբեության արդյունքում կորցրել են վաճառքի գումարը:

Անահիտը ասում է, որ սննդի գնման հետ կապված դժվարություններ են ունենում: Քանի որ Կենտրոնում դժվար է գտնել պարտքով վաճառք անող խանութներ, ընտանիքը հիմնականում պարտքով գումար է վերցնում գնումներ կատարելու համար: Փոքր տղան հաճախում է «Օրրան» ԲԿ՝ այնտեղ է սնվում, նաև մասնակցում է կենտրոնի խմբակներին:

Անահիտը աշխատում է որպես մաքրուհի՝ շաբաթական 6 օր, օրը 5 ժամ: Աշխատավարձը 53 հազար դրամ է: Բացի այդ, գործարքային աշխատանք է կատարում, կրկին իբրև մաքրուհի: Ընտանիքի եկամուտները ներառում են նաև սկեսրոջ թոշակը՝ 36 հազար դրամ: Ընտանիքն ունի **6 միլիոն դրամի պարտք, որը վերցրել են ամուսնու սիրտը վիրահատելու և սկեսրոջ ծնկի վիրահատության համար:**

Անահիտն իրեն համարում է սոցիալապես անապահով: Անահիտն ասում է, որ **իր ամբողջ մտածմունքն այն է, որ շատ աշխատի, որ կարողանա տան վարձը և կոմունալները վճարել:**

Ալինա
Դուստրը դպրոցում ընկերներ չի ունեցել՝ աղքատ լինելու պատճառով:

ԱԼԻՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

«Երեխան ամաչում էր, ընդհանրապես չէր ուզում դպրոց գնար, ամաչում էր դաս պատասխանել, մտածում էր իր վրա կծիծաղեն...»

Ալինան ապրում է 2 դստերերի հետ, վարձակալում են 2 սենյակ՝ ծեր ամուսինների տանը: Ալինան աշխատում է պետական բժշկական համալսարանի քոլեջում որպես բուժքույր, սակայն վտանգ կա, որ հաստիքը կկրճատվի: Նպաստ համակարգում ներառված չէ, քանի որ եթե հաշվառվեր ամուսինների տանը՝ նրանց նպաստից կզրկեին:

Տան վարձը 35 հազար դրամ է: Ջուր չկա՝ դրսից են բերում: Գազ նույնպես չկա՝ օգտվում են փոքր գազի բալոնից: Ջուգարանը դրսում է: **Լողանում են Ալինայի ծնողների տանը:**

Ալինան ամուսնալուծված է. ամուսինը վճարում է ընդամենը 10 հազար դրամ ալիմենտ յուրաքանչյուր երեխայի համար: Պատմում է, որ երբ ամուսնու հետ էին ապրում, ավելի վատ պայմաններում էին: Ամուսինը աշխատում էր, սակայն գումարը տուն չէր բերում, տան ողջ հոգսը Ալինայի 25 հազար դրամ աշխատավարձով էին լուծում:

Առողջական խնդիրների մասին Ալինան տեղյակ չէ, քանի որ չի գնում բժշկի: Վստահ է՝ եթե գնա, «լիքը խնդիրներ կգտնեն»: Անվճար բժշկական ծառայություններից չեն օգտվում, քանի որ որակը շատ ցածր է. մեկ անգամ աղջիկներից մեկին սխալ ախտորոշում են արել՝ վիճակը վատթարացնելով:

«**Մարդիկ սառն են սոցիալապես անապահով մարդկանց նկատմամբ:** Կարծում են, որ իրենք երբեք աղքատ չեն լինի: Եղել է, որ դասարանցին իր ծնունդին երեխուս չի կանչել: **Աղջիկս դպրոցում ընկերներ չի ունեցել իր սոցիալական վիճակի պատճառով**»,- ասում է Ալինան:

Ըստ Ալինայի, աղքատությունից հնարավոր է դուրս գալ, «եթե օրենք լինի»: Աղքատության հաղթահարման համար կարևորում է կրթության ոլորտը: Ասում է, որ պետությունը պետք է պարտավորություն ունենա որակյալ կրթությամբ ապահովել երեխաներին, իսկ հետո աշխատանքի տեղավորել:

Ալինայի համար երազանք է բնակարան ունենալը: **Եթե ծնողները չօգնեին, իրենք դրսում կհայտնվեին:** Ըստ Ալինայի, աղքատության պատճառով ոտնահարվում են մարդու բավարար կենսամակարդակի, կրթության, առողջության, կացարան ունենալու, ազատ տեղաշարժման, հանրային և մշակութային կյանքին մասնակցելու իրավունքները:

Յուրաքանչյուր ոք ունի արժանապատիվ կյանքով ապրելու իրավունք, որը պետք է ապահովվի պետության կողմից: ***Աղքատության յուրաքանչյուր պատմություն իրավունքների խախտման պատմություն է:***

ԻՆՉԻ՞Ն Է ՆՊԱՍՏՈՒՄ ՆՊԱՍՏԸ

Սոնա, 16տ.
Գումար ունենալու դեպքում առաջին հերթին տուն կգներ, հետո ով կարիքի մեջ է՝ նրանց կօգներ:



«Ի՞նչ է աղքատությունը»:
Նկարված է Սոնայի կողմից:

ՍՈՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«Աղքատ մարդիկ լարված են, քանի որ ուզում են ուրիշների նման լինել...»

Սոնան Ալինա Վարդանյանի դուստրն է: 16 տարեկան է, սովորում է Երևանի համար 6 արհեստագործական պետական ուսումնարանում, պատրաստվում է դերձակ դառնալ: Արդեն երկրորդ կուրսում է:

Սոնան «Օրրան» բարեգործական կազմակերպությունում վարում է կարի խմբակը: Նաև վերջերս հագուստի ցուցադրության է մասնակցել, որտեղ իր կարած հագուստն է հագել:

Կարծում է, որ Հայաստանում հիմա (նկատի ունի՝ հեղափոխությունից հետո) ավելի լավ է, ավելի խաղաղ է: Ասում է, որ եթե ինքը որոշում կայացնող լիներ, այնպես կաներ, որ բոլորը տուն ունենային ու աշխատավարձները բարձր լիներ: **Կարծում է, որ հիմա Հայաստանում աշխատավարձերը շատ չնչին են:**

Ուզում է ուսումնարանն ավարտելուց հետո ընդունվել Մանկավարժական համալսարան: Հիմա «Տոսպ» տրիկոտաժի ֆաբրիկայում պրակտիկա է անցնում փաթեթավորման բաժնում՝ ուսումնարանն ավարտելուց հետո կանչել են այնտեղ աշխատանքի:

Սոնան **ուզում է, որ «ով ինչքան ուզի էդքան աշխատի ու դրա դիմաց վարձատրվի»:** Գումար ունենալու դեպքում առաջին հերթին տուն կգներ, հետո ով կարիքի մեջ է՝ նրանց կօգներ:

Կարծում է, որ **ավելի շատ կարիքի մեջ են, օրինակ, նրանք, ովքեր հայր չունեն, նաև նրանք, ովքեր շատ երեխաներ ունեն**, բայց չեն հասցնում բոլորին պահել: Ասում է, որ աղքատ մարդիկ հիմնականում ագրեսիվ են լարվածության պատճառով, իսկ լարված են, քանի որ ուզում են ուրիշների նման լինել:

Իր կողմից պատկերած աղքատությունը Սոնան նկարագրում է հետևյալ կերպ՝ «Փակ քառակուսիում մութ ա, ու ներսում երեխայա, կարևոր չի՝ աղջիկ թե տղա: Մի օր ինքը քառակուսիից դուրս գալ ա որոշում ու շատ ա աշխատում, ու հայտնվում ա մյուս քառակուսիում, որտեղ ավելի լավ է ու լուսավոր: Հետո ավելի ա մեծանում ու էտ քառակուսիից էլ ա դուրս գալիս, ու ազատության մեջ ա հայտնվում»:

Յուրաքանչյուր ոք ունի արժանապատիվ կյանքով ապրելու իրավունք, որը պետք է ապահովվի պետության կողմից: ***Աղքատության յուրաքանչյուր պատմություն իրավունքների խախտման պատմություն է:***

ԻՆՉԻ՞Ն Է ՆՊԱՍՏՈՒՄ ՆՊԱՍՏԸ

Լուսինե
Իր հանդեպ անարդարությունը
բարձրաձայնելու համար ծայրահեղ քայլերի է դիմել:



ԼՈՒՍԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ

«Ինձ մանկատանը բան չեն սովորացրել, որ ես էլ երեխաներիս կարողանամ օգնել...»

Լուսինեն մանկատան սան է: Մանկատնից դուրս գալուց ի վեր բնակվում է հանրակացարանում՝ 7 և 10 տարեկան աղջիկների հետ, ծայրահեղ վատ պայմաններում: Նպաստ ստանում է արդեն մոտ 10 տարի:

Հանրակացարանը պետական չէ՝ պատկանում է մասնավոր սեփականատիրոջ: Վթարային է՝ չորրորդ կարգի: Զուգարան-բաղնիքը միասին են, խոնավ, պատուհանները ջարդված, ձմռանն այստեղ լողանալն անհնար է: Լուսինեի սենյակում ջուր չկա՝ օգտագործում է ընդհանուր լոգարանի սառը ջուրը: Շենքում գազ չկա: Ձմռանը տաքացնում են վառելափայտով, որը պարբերաբար տրամադրում է Թաղապետարանը: Լուսինեն ասում է, որ ամենաշատը «նորմալ լոգարանի» կարիք ունի:

Լուսինեն վստահ է, որ շատ գինեկոլոգիական խնդիրներ ունի, սակայն բժշկի գնալ իրեն թույլ տալ չի կարող: Առհասարակ, հանրակացարանի բոլոր կանայք ունեն գինեկոլոգիական խնդիրներ, ասում է Լուսինեն, «էս մի հատ ընդհանուր բաղնիք-զուգարանից որ օգտվենք, բա էլ ոնց պիտի լինի»:

Լուսինեն մի ձեռքը չի կարողանում մինչև վերջ ծալել, մյուս ձեռքի երկու մատները չեն գործում ընդհանրապես: Առողջական լուրջ խնդիրներ ունեն նաև երեխաները: 10 տարեկան աղջիկը հաճախամիզություն ունի: Նախկինում «Սոս» մանկական գյուղերը տակդիրներ էին տրամադրում, հիմա ծրագիրն ավարտվել է, և Լուսինեն չի կարողանում գնել: Ասում է, որ **երեխաների օգնության հարցում ամենաշատը հենց տակտիրդների կարիք ունի:** Փոքր աղջիկն էլ լուսնոտություն ունի:

Լուսինեն մեծ հույսեր է կապում նոր կառավարության հետ: Նախկինում խնդիրներ է ունեցել ոստիկանության անգործության պատճառով: Հարևանի խաբեության զոհն է դարձել, սակայն ոստիկանությունը շարունակաբար անտեսել է Լուսինեի բողոքը, հեգնական վերաբերմունքի է արժանացրել կնոջը: Արդարության իր պահանջը բարձրաձայնելու համար Լուսինեն **երկու անգամ ինքնասպանության փորձ է կատարել՝** մեկ անգամ կամրջից է կախվել, մյուս անգամ ինքնահրկիզման փորձ է արել:

Լուսինեն շատ է կարևոր երեխաների կրթությունը: Ասում է, որ **աղքատության պատճառով երեխաները հաճախ ծաղրական և քամահրական վերաբերմունքի են արժանանում դպրոցում:**

*Յուրաքանչյուր ոք ունի արժանապատիվ կյանքով ապրելու իրավունք, որը պետք է ապահովվի պետության կողմից: **Աղքատության յուրաքանչյուր պատմություն իրավունքների խախտման պատմություն է:***

ԻՆՉԻ՞Ն Է ՆՊԱՍՏՈՒՄ ՆՊԱՍՏԸ

Էմմա, 82տ.
8 տարի է ապրում է փողոցում՝ «Բաղրամյան» մետրոյի վերևում, անօրինության պատճառով:

ԷՄՄԱ ՍԱՀԱԿՅԱՆ

«Մեր ժողովրդի մեջ շատ-շատերը կան, որ անօրինության պատճառով աղքատացել են...»

Էմման 82 տարեկան է: 2009թ.-ից անօրինության զոհ է դարձել: Նախկինում բնակվել է քրոջ տանը, խնամել է նրան: 2009թ.-ին քույրը մահացել է: Քրոջ մահից հետո 15 օր գրանցումից դուրս եկած է եղել անօրինական: Եկել է տուն, տեսել դռան փականը փոխած, կապարանակնքած: **Ամառային հագուստով հայտնվել է դրսում:** Գրանցումից նրան հանել և դուռը կողպել է մյուս քրոջ աղջիկը: «Գնացի ոստիկանություն, ասեցին որ 15 օր ա դուրս եմ գրված այդ բնակարանից: Երկու ամիս անց քրոջս աղջիկը վաճառեց բնակարանը»:

Էմման Դիմել է մինչև վճռաբեկ դատարան, բայց վերջինս նույնիսկ վարույթ չի ընդունել: Քննիչը գրել է, որ հանցակազմ չկա: «Էդ կինը վաճառել ա իմ բոլոր իրերը՝ կահույք, ոսկեղեն և այլն: 2012թ. հունիսի 15-ից անցել եմ նստացույցի, արդեն ութ տարի»: Կինն **արդեն ութ տարի է ապրում է դրսում՝** Բաղրամյան մետրոյի մոտ, այնտեղ է քնում: Պատմում է, որ այդտեղ ուժեղ միջանցիկ քամի է: Հաճախ պաշտոնյաները, որ գալիս են իր հետ զրուցելու, չեն դիմանում ցրտին:

Ունի տղա և աղջիկ, ովքեր նույնպես տուն չունեն, ապրում են վարձով, երեխաների հետ շփվում է հազվադեպ: Երեխաները չեն օգնում, Էմման ասում է՝ «ինչո՞վ օգնեն, մեկը լինի իրենց օգնի»:

Նպաստ չի ստանում: Աշխատանքային օրերին ցերեկները սնվում է «Օրրան» ԲԿ-ում: Երեկոները, եթե թոշակը հերիքում է, սնվում է սուպերմարկետների պատրաստի սննդով: Հաճախ քաղցած է մնում: Լողանալու համար այցելում է հանրային բաղնիք, երբեմն ընկերուհու տուն, ասում է մի կին կա, ով օգնում է, ձմռանը ջեռակներով (գրելկաներով) և շշերով տաք ջուր է բերում, որ գիշերները մարմինը տաք մնա: Էմման ունի հաշմանդամության երկրորդ խումբ. սրտի մկանների մի հատվածը կաթված է տարել, անոթները լավ չեն աշխատում:

Ասում է, որ չի կարող օգնություն խնդրել բարեկամներից, քանի որ բարեկամներն էլ լավ վիճակում չեն: Բացի այդ, ըստ Էմմայի, **ինքն այդ ուղղին ընտրել է հանուն արդարության**. «...մինչև էս դիմացել եմ, բայց չեմ պատկերացնում էս ձմեռ ոնց եմ անցկացնելու: Իմ տունը թող վերադարձնեն ինձ: Եթե չկա, ինձ մի սենյականոց բնակարանով թող ապահովեն, որ ես կարողանամ ապրեմ: Ութը տարի, դրսում...»:

Յուրաքանչյուր ոք ունի արժանապատիվ կյանքով ապրելու իրավունք, որը պետք է ապահովվի պետության կողմից: ***Աղքատության յուրաքանչյուր պատմություն իրավունքների խախտման պատմություն է:***

ԻՆՉԻ՞Ն Է ՆՊԱՍՏՈՒՄ ՆՊԱՍՏԸ

Լաուրա, 80տ.
Մահճակալ չունի: Քնում է աթոռի վրա:



ԼԱՈՒՐԱ ՍԱՐԱՏԻԿՅԱՆ

Լաուրան 80 տարեկան է: Ծնվել և ապրել է Երևանում՝ Սարի թաղում: Ավարտել է Բժշկական ուսումնարանը՝ որպես բուժակ: Աշխատել է «Նաիրիտ» գործարանում որպես ինժեներ-քիմիկ 1966 թվականից մինչև գործարանի փակվելը: Աշխատել է որպես բուժակ, քիմիկ, ապա հավաքարար: 2005թ.-ին ամուսինը ենթարկվել է վթարի և մահացել:

Լաուրան ուներ երեք որդի: Նրանցից մեկը սրտի կաթված է տարել և Ռուսաստանում մահացել: Մյուս **երկու որդիները Լաուրայի մասին հոգ չեն տանում:** Լաուրայի բնակարանը կիսել են երկու մասի՝ մի սենյակում բնակվում է Լաուրան, մյուսում՝ տղաներից մեկը իր ընտանիքի հետ:

Սենյակը, որտեղ բնակվում է Լաուրան, ոչ բարվոք վիճակում է: Էլեկտրաէներգիայի լարերը կախված են, **կտուրից ջուր է կաթում, կյանքի համար անվտանգ չէ:**

Թոշակառու է 50 տարեկանից: Լաուրան մի քանի անգամ այցելել է Շենգավիթի սոցապ բաժին՝ բողոքելով, որ ստաժը քիչ են հաշվարկել, և թոշակը քիչ է ստանում:

Լաուրան սնվում է «Օրրան» ԲԿ-ում, օրվա մեծ մասը այնտեղ է անցկացնում: Ասում է, որ այս պահին մահճակալի կարիք ունի՝ իր անկողինը ջարդված է և **ինքը քնում է աթոռի վրա:**

1988 թվականից ունի պորտային ճողվածք: Առաջին անգամ վիրահատվել է 2009 թվականին: 72 օր հետո շարունակել է աշխատել «Նաիրիտում» որպես հավաքարար, որից հետո կրկին ստացել է պորտային ճողվածք և կրկին վիրահատվել 2018 թվականին:

Վիրահատվելուց հետո, սակայն, Լաուրայի վիճակը չի լավացել: Արյունահոսությունները շարունակվում են, որովայնում մնացած աղիքները լավ չեն գործում, միզապարկը, երիկամները, արգանդը և ուղիղ աղիքը բորբոքված են: **Կերածը մարսել չի կարողանում:**

Լաուրան ցանկանում է հաշմանդամության խումբ ունենալ, որպեսզի կարողանա պետպատվերով հոսպիտալացվել:

Յուրաքանչյուր ոք ունի արժանապատիվ կյանքով ապրելու իրավունք, որը պետք է ապահովվի պետության կողմից: ***Աղքատության յուրաքանչյուր պատմություն իրավունքների խախտման պատմություն է:***

HUMAN RIGHTS
RESEARCH CENTER

© Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն, 2019թ.